ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

«06» «Հոկտեմբեր» 2022թ. № 298-Ա

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 6-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելված 26-րդ կետի 11-րդ ենթակետով, վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 2-ի N 1785-Լ որոշմամբ,առաջին փոխվարչապետի 2018 թվականի հուլիսի 31-ի N 29-Ն որոշման հավելվածի 4-րդ և 7-րդ կետերով և հիմք ընդունելով վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից 2022 թվականի մայիսի 5-ի N 42/45.45/14358 գրությամբ ներկայացված համաձայնությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի 2020 թվականի հունվարի 10-ի «Շրջակա միջավայրի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու և բնապահպանության նախարարության գլխավոր քարտուղարի 2018 թվականի օգոստոսի 15-ի N 476-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 6-Լ հրամանում կատարել հետևյալ լրացումները.

1) հրամանով հաստատված 445-րդ և 446-րդ հավելվածներում՝ շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության համակարգչային տեխնիկայի սպասարկման բաժնի պետի (ծածկագիր՝ 15-33.2-Ղ4-6) և շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության համակարգչային տեխնիկայի սպասարկման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 15-33.2-Մ2-20) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի 3-րդ կետի 3.1-րդ ենթակետը լրացնել նոր՝ 3-րդ աղյուսակով, հետևյալ բովանդակությամբ.

«կամ

1	Ուղղություն	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2	Ոլորտ	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՔԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3	Ենթաոլորտ	Տնտեսագիտություն

»

5/6/2022

X

ԳՐԻԳՈՐ ԳՈՒԼՅԱՆ

Signed by: GULYAN GRIGOR 3202780018

Գ.ԳՈՒԼՅԱՆ

« 06 » մայիսի 2022թ.
ք. Երևան